


† † † HOKEHANKISD † † †

VAHRAM BEDROSSIAN (1st Anniversary)
Requested by: Der Hayr and Board of Trustees
Varsen Bedrossian
Adam & Leona Bedrossian and Lucas
Christopher & Kelly Bedrossian

MARAL MELKONIAN AVETISYAN (6th Anniversary)
Requested by: Der Hayr and Board of Trustees
Ara and Haiganoush Melkonian
Raffi, Medea, Ara, Emeen , Zareh and Vanna Melkonian



CHURCH ATTENDANCE PROCEDURE:

- You MUST call and RESERVE your seat by the Saturday BEFORE Sunday’s service.
- You MUST wear a MASK when you are on church property at ALL times.
- Upon entrance into the church foyer you MUST sign in and follow COVID-19 protocols




2020 & 2021 Membership Dues – Parishioners who have not paid their 2020 Annual Membership dues are encouraged to remit payment. 2021 Membership Dues are also acceptable now. The membership fees are \$150.00 for adults and \$50.00 for each full time student, ages 18-26. These dues are 100 percent tax deductible



† On Sunday April 25, 2021, a special service will be held, following the Divine Liturgy, in front of the Khatchkar for the remembrance of The April 24, 2015 Holy Martyrs. †

Ս. ԽԱԶ ՀԱՅՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
SOORP KHATCH ARMENIAN
APOSTOLIC CHURCH

☞ SUNDAY, APRIL 18, 2021 ☛



ՉԱՅՆ ԴՉ

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻ/ԿԱՆԱԶ
GREEN SUNDAY

This Sunday’s service will be open to the public, with limited seating, according to COVID-19 guidelines.

Ս. Պատարագ Առ. Ժամը 10:30-ին հեռարձակում
Divine Liturgy 10:30 A.M. Live Streamed

Soorp Khatch Armenian Apostolic Church
4906 Flint Drive, Bethesda, MD 20816
Office Hours: 10:00 a.m. - 2:00 p.m.
Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393
E-mail: soorpkhatch@verizon.net
Web Page: www.soorpkhatch.org
Rev. Fr. Sarkis Aktavoukian, Pastor
Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

All Sick



Parishioners

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԻՆ

----- (2. 1 - 10) -----

Հետեւաբար մէկդի՛ ձգեցէք ամէն տեսակի չար մտածում ու նենգութիւն, կեղծաւորութիւն ու նախանձ եւ ամէն տեսակի չարախօսութիւն: Որպէս հաւատքի նորածին մանուկներ՝ Աստուծոյ խօսքին անխարդախ կաթին փափաքեցէք, որպէսզի անով աճիք եւ փրկութեան հասնիք: «Անգամ մը որ Տիրոջ խօսքին համը առնէք. պիտի տեսնէք թէ քաղցր է ան»: Մօտեցէ՛ք անոր, Քրիստոսի, որովհետեւ ինքն է այն կենդանի վէմը, որ թէպէտ մարդոցմէ մերժուած, բայց Աստուծոյ ընտրուած պատուական վէմն է: Այդպիսով դու՛ք ալ, որպէս կենդանի քարեր, Քրիստոսի վէմին վրայ կը կառուցուիք՝ իբրեւ հողեւոր տաճար-իւրաքանչիւրդ կը դառնաք անարատ քահանաներ եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ հողեւոր ընդունելի պատարագ կը մատուցանէք Աստուծոյ: Որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է.-

«Ահա ես Սիոնի մէջ կը դնեմ
ընտրուած վէմ մը, պատուական անկիւնաքար մը.
անոր հաւատացողը յուսախար պիտի չըլլայ»:

Քանի դուք հաւատացիք Քրիստոսի, անիկա ձեզի համար պատուական վէմը եղաւ. մինչդեռ չհաւատացողներուն համար՝ անիկա

«Այն քարն է,
որ թէպէտ շինողները մերժեցին գործածել,
բայց ինք անկիւնաքարը եղաւ»:», կամ՝

«Այն քարն է, որ գրորումի եւ գայթակրութեան առիթ» պիտի ըլլայ անոնց համար՝ որոնք Աստուծոյ խօսքը անհամոզիչ գտնելով կը գայթակղին, ինչպէս որ Աստուած նախատեսած էր:

Գալով ձեզի, դուք ընտրուած ցեղ մըն էք, թագաւորելու կոչուած քահանաներ, սուրբ ազգ մը, Աստուծոյ սեփական ժողովուրդը. եւ ձեր պարտականութիւնն է քարոզել զօրութիւնը անոր՝ որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց: Որովհետեւ հիմա Աստուծոյ ժողովուրդն էք, մինչ նախապէս չէիք. հիմա իր ողորմութիւնը կը վայելէք, մինչ նախապէս գրկուած էիք անկէ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

----- (2:23 - 3.12) -----

Ձատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ճանչնար եւ պէտք չունէր ոեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի ինք գիտէր թէ ինչ կայ մարդոց սիրտին մէջ:

Նիկողեմոս անունով մարդ մը կար, Հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի քով եկաւ եւ ըսաւ անոր.

- Վարդապետ, գիտենք որ դուն Աստուծոյ կողմէ ղրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կրնայ գործել քու կատարած հրաշքերդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ:

Յիսուս պատասխանեց անոր.

- Լաւ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը:

Նիկողեմոս հարցուց անոր.

- Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ ծնիլ: Կարելի՞ է բան է որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի:

Յիսուս պատասխանեց.

- Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը ջուրէն եւ հողիէն չծնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ հողիէն ծնածը՝ հողի: Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է վերստին ծնիք: Հովը ո՛ւր որ ուզէ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ՛ կու գայ եւ ո՛ւր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հողիէն կը ծնին:

Նիկողեմոս հարցուց.

- Ինչպէ՞ս կրնայ պատահիլ ատիկա:

Յիսուս պատասխանեց.

- Դուն որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա չե՞ս գիտեր: Լաւ գիտցիր, թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չէք հաւատար, ինչպէ՞ս պիտի հաւատաք ինծի՝ եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ:



SCRIPTURE READINGS



I PETER 2:1-10

Therefore, rid yourselves of all malice and all deceit, hypocrisy, envy, and slander of every kind. Like newborn babies, crave pure spiritual milk, so that by it you may grow up in your salvation, now that you have tasted that the Lord is good.

As you come to him, the living Stone--rejected by men but chosen by God and precious to him-- you also, like living stones, are being built into a spiritual house to be a holy priesthood, offering spiritual sacrifices acceptable to God through Jesus Christ. For in Scripture it says:

*"See, I lay a stone in Zion,
a chosen and precious cornerstone,
and the one who trusts in him will never be put to shame."*

"Now to you who believe, this stone is precious. But to those who do not believe, "The stone the builders rejected has become the capstone, "and, "A stone that causes men to stumble and a rock that makes them fall." They stumble because they disobey the message--which is also what they were destined for. But you are a chosen people, a royal priesthood, a holy nation, a people belonging to God, that you may declare the praises of him who called you out of darkness into his wonderful light. Once you were not a people, but now you are the people of God; once you had not received mercy, but now you have received mercy.

JOHN 2:23-3:12

Now while he was in Jerusalem at the Passover Feast, many people saw the miraculous signs he was doing and believed in his name. But Jesus would not entrust himself to them, for he knew all men. He did not need man's testimony about man, for he knew what was in a man.

Now there was a man of the Pharisees named Nicodemus, a member of the Jewish ruling council. He came to Jesus at night and said, "Rabbi, we know you are a teacher who has come from God. For no one could perform the miraculous signs you are doing if God were not with him." In reply Jesus declared, "I tell you the

truth, no one can see the kingdom of God unless he is born again." "How can a man be born when he is old?" Nicodemus asked. "Surely he cannot enter a second time into his mother's womb to be born!" Jesus answered, "I tell you the truth, no one can enter the kingdom of God unless he is born of water and the Spirit. Flesh gives birth to flesh, but the Spirit gives birth to spirit. You should not be surprised at my saying, 'You must be born again.' The wind blows wherever it pleases. You hear its sound, but you cannot tell where it comes from or where it is going. So it is with everyone born of the Spirit."

"How can this be?" Nicodemus asked. "You are Israel's teacher," said Jesus, "and do you not understand these things? I tell you the truth, we speak of what we know, and we testify to what we have seen, but still

you people do not accept our testimony. I have spoken to you of earthly things and you do not believe; how then will you believe if I speak of heavenly things?

GREEN SUNDAY

This Sunday is Green Sunday, also known as Sunday of the World Church in the sense of the church belonging to the whole world beginning with Christ and the Apostles who met regularly to pray and partake of the Holy Sacrament of Communion.

The concept of Green Sunday most probably comes from an ancient folk holiday celebrating spring. Our forefathers, seeing mother earth bloom after long winter months, glorified the Creator with an act of thanksgiving and celebrated by decorating the church and themselves with greenery. Green is the color of life, freshness and promise. After a barren winter we are filled with hope, life, and love.

ԱՇԽԱՐՀԱՄՏՐԱՆ ԿԱՄ ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ

Աշխարհամատուռ բառը կը գործածուի բազմութեան յատկացեալ եկեղեցի իմաստով: Այս անունը տրուած է նաեւ Սիոնի Վերնատան՝ ուր Քրիստոս վերջին ընթրիքը կատարեց եւ հաղորդութեան Խորհուրդը հաստատեց: Այնուհետեւ, Քրիստոսի Համբարձումէն ետք, Առաքեալները սովորութիւն ըրին այնտեղ հաւաքուիլ եւ նոր հաւատացեալներուն հետ հաղորդութիւն, աղօթք եւ սիրոյ սեղան ունենալ:

Աշխարհամատրան Տօնը, այսինքն Վերնատան Քրիստոնէ- ութեան առաջին եկեղեցին ըլլալուն յիշատակը, բոլոր Քրիստոնեայ եկեղեցիներուն նախատիպը եղաւ:

Աշխարհամատրան Կիրակին կը կոչուի նաեւ Կանաչ Կիրակի. կը կարծուի որ այս անուանումը առնչուած է բնութեան կանաչապատման հետ :



NO HOKEHANKISD SERVICES ON FEAST SUNDAYS:

- July 11.....Feast of the Transfiguration
- August 15.....Assumption of the Holy Mother of God
- September 12.....Exaltation of the Holy Cross

Այս տարի հոգեհանգիստ կարելի չէ կատարել հետեւալ տաղաւար տօներուն.

- *Կիրակի, Յուլիս 11.....Այլակերպութիւն Քրիստոսի*
- *Կիրակի, Օգոստոս 15.....Սուրբ Աստուածածին*
- *Կիրակի, Սեպտեմբեր 12.....Խաչվերաց*

Յ Ի Ն Ո Ի Ն Ք

Յինունք կը կոչուի Զատիկէն մինչեւ Հոգեգալուստ երկարող 50 օրերը, որոնք ամբողջովին Տէրունի տօներ են՝ նուիրուած Քրիստոսի Յարութեան եւ Համբարձումին, իսկ յիսուներորդ օրն ալ՝ Հոգեգալուստին:

Յինունքի իւրաքանչիւր Կիրակին ունի յատուկ անուանում.


1. Ս. Զատիկ
2. Նոր Կիրակի կամ Կրկնագատիկ
3. Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի
4. Կարմիր Կիրակի
5. Երեւումն Ս. Խաչի
6. Երկրորդ Ծաղկազարդ
7. Հոգեգալուստ

Eastertide

The 50 days from Easter to Pentecost is called Hinoonk (Eastertide), which are all feasts of the Lord, dedicated to the Resurrection and Ascension of Christ, and the fiftieth day to Pentecost.

Each Sunday of Hinoonk has a special name:

1. Easter
2. New Sunday or Second Easter
3. Ashkharhamatran or Green Sunday
4. Red Sunday
5. The Apparition of the Holy Cross
6. Second Palm Sunday
7. Pentecost



Աստուծոյ Ողորմութիւնը Խնդրելու Աղօթք

Տէ՛ր Աստուած, մեր Փրկիչը, որ ողորմած ես եւ գթած, համբերատար եւ առատագութ, եւ որ կը մեղքնաս մարդիկը պատժելու անոնց գործած չարիքներուն համար: Դուն՝ որ մեղաւորին մահը չես կամենար, այլ՝ կ'ուզես որ անիկա իր չար ընթացքէն դառնայ եւ փրկուի: Քու առատ ողորմութեամբդ Տէ՛ր, մխիթարէ մեզ՝ քու ծառաներդ, եւ ապաշխարութեան առիթ տուր մեզի: Հաշտուէ մեզի հետ, ո՛վ մարդասէր, ու մեզ վերստին քու սուրբ եկեղեցիդ անդամ դարձուր: Որպէսզի հոգիով առողջացած, խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ մտնենք քու սուրբ եկեղեցիդ, եւ ժողովուրդիդ հետ միասին օրհնութիւն ու փա՛ռք տանք քեզի՝ Հօրդ, Որդիիդ եւ Սուրբ Հոգիիդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտինից: Ամէն:



A Prayer to Ask for God's Mercy

Lord God, our Savior, who is merciful and compassionate, patient and abundant, and who is guilty of punishing people for the evils they have committed. You do not want the sinner to die, but you want him to return from his evil course and be saved. Through thy abundant mercy, O Lord, comfort us, thy servants, and give us occasion to repent. Reconcile with us, O philanthropist, and make us members of your holy church again. That we may enter into your holy church, sanctified, and repenting, and that we may bless and glorify you, your Father, your Son, and your Holy Spirit, together with your people. now and always and for all eternity. Amen:



ԱՂՈԹՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Փարատէ՛ ցաւերն ու բժշկէ՛ ժողովուրդիդ հիւանդութիւնները Տէր Աստուած մեր, եւ քու ամենայաղթ Խաչիդ նշանով կատարեալ առողջութիւն շնորհէ՛ բոլորին. որով, քու խաչովդ մարդոց տկարութիւնը վերցուցիր, եւ մեր կեանքի ու փրկութեան թշնամին դատապարտեցիր:

Դուն ես մեր կեանքն ու փրկութիւնը բարերար եւ բազումողորմ Աստուած. միայն դուն կրնաս մեր մեղքերուն թողութիւն շնորհել, եւ ախտերն ու հիւանդութիւնները հեռացնել, որովհետեւ միայն Քեզի յայտնի են մեր կարիքները:

Ո՛վ բարիքներ պարգեւող, քու առատ ողորմութիւնդ պարգեւէ՛ արարածներուդ, իւրաքանչիւրին իր կարիքին համեմատ. որպէսզի միշտ փառաւորուելով գովաբանուի ամենասուրբ Երրորդութիւնդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

A Prayer for the Healing of the Sick

Lord our God, take away the pain and heal the sickness of your people. Grant them all complete health by the sign of your all-triumphant cross, by which you took away the frailty of the human race and condemned the adversary for our life and salvation. You are our life and salvation, O good and merciful God. You alone are able to forgive sins and to drive pain and sickness out of us, and you know how to cure our afflictions. O Giver of good gifts, give your creatures the gift of your abundant mercy, each according to their needs. Let us always glorify and praise the all-holy Trinity, now and always and unto the ages of ages. Amen.



Ա Ղ Օ Թ Ք

Պահպանիչ եւ յոյս բոլոր հաւատացեալներուն՝ Քրիստոս Աստուած մեր, Հայաստանեայց առաքելական Սուրբ Եկեղեցին անսասան պահէ, եւ հաւատացեալներուն մէջ աստուածգիտութեանդ յոյսն ու սէրը բորբոքէ: Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններն ու Հայոց բանակը ամրացուր, եւ Հայ ազգի միասնականութիւնը անխախտ պահէ: Օրինէ՛ համայն հաւատացեալ ժողովուրդը քու սուրբ Խաչիդ ամենակարող զօրութեամբը: Փրկէ, ազատէ, երեւելի եւ աներեւոյթ ամէն տեսակ թշնամիներէ ու փորձութիւններէ, եւ մանաւանդ պսակաձեւ ժահրի սպառնալիքէն: Նահատակներու հոգիները երկնքի արքայութեանդ արժանացուր եւ անոնց պարագաները Քու Սուրբ Հոգիովդ մխիթարէ: Գերիները իրենց կապանքներէն ազատէ, եւ զաղթականներուն տուն դարձը սպահովէ: Մարմնով, մտքով, սրտով ու հոգիով վիրաւորեալներուն բժշկութիւն պարգեւէ եւ արժանի ըրէ մեզ՝ զոհութեամբ փառաւորելու Ամենասուրբ Երրորդութիւնդ: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

A PRAYR

May God, the preserver and hope of all believers, keep the covenant of the unity of the Armenian people inviolable, keep the Armenian Apostolic Holy Church unshakable and inflame theology and love in the believers, strengthen the nations of Armenia and Artsakh and the Armenian army. Under the umbrella of your cross. Save, deliver, from all visible and invisible enemies and temptations. Make the souls of the martyrs worthy of the kingdom of heaven and comfort them with Your Holy Spirit. Calm the hearts of the relatives of the missing, make the captives safe, ensure the return of the refugees, and heal the wounded physically, mentally, emotionally and spiritually. Make us worthy to glorify the Most Holy Trinity with gratitude. Now and always and forever and ever. Amen:



**REGISTER FOR DATEV SUMMER PROGRAM
VIA ZOOM: JUNE 28 – JULY 2, 2021**

The Armenian Prelacy has planned a virtual St. Gregory of Datev Institute Program for youth ages 13-18, scheduled to take place from Monday, June 28 to Friday, July 2, 2021, from 11:00am to noon (Eastern Standard Time), and will include mini lectures and engaging discussions on faith related topics.

To register please go to the following link:

<https://armenianprelacy.org/programs/datev/>

If you have any questions, please contact Dn. Shant by email or by calling:

shant@armenianprelacy.org
212-689-7810

2021 FEASTS

May 2	Apparition of the Holy Cross
May 13	Ascension
May 23	Pentecost
May 31	Saints Hripsimiank
June 1	Saints Kayaniank
June 5	Saint Gregory the Illuminator's Delivery from the Pit
June 6	Feast of Holy Etchmiadzin
June 19	Discovery of St. Gregory the Illuminator's Relics
June 24	Saint Sahak and Saint Mesrob
June 26	King Tirdat, Queen Ashkhen and Khosrovidoukht
July 11	Feast of the Transfiguration
July 17	Saint Thaddeus and Saint Sandoukht
August 15	Assumption of the Holy Mother of God
September 12	Exaltation of the Holy Cross
September 25	Saint Kevork (George)
September 26	Holy Cross of Varak
October 9	Holy Translators
October 24	Discovery of the Cross
November 6	Holy Archangels Gabriel & Michael
November 20	Feast of All Saints
December 4	Saint Thaddeus and Saint Bartholomew
December 18	Saint Hagop (James) of Nisibis
December 23	Saints David the Prophet & Holy Apostle James
December 25	Saint Stephen the Protomartyr
December 27	Saints Peter and Saint Paul
December 28	The Holy Apostle James & John the Evangelist